The picture can't be displayed.

«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ <<ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առարկան՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտող ուսուցիչ՝ Խաչատրյան Լուսիկ Շահենի

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, ք.Մասիս հ2 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ1. Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը <<Աշխարհագրություն>>առարկայի միջոցով

1.1.Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում 7

ԳԼՈՒԽ2.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2.1.Հետազոտական աշխատանքի կազմակերպում և արդյունքների վերլուծություն..... 38

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 59

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 64

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդե-սերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է: Ուսումնառության ողջ գործընթացում աշակերտները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ, աշխարհաճանաչողություն, այլև անձնային բարձր որակներ: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Սովորողների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում նրանց զարգացման լայն հնարավորությունների մասին:

Աճող սերնդի կրթության և դաստիարակության քայլերը իրականացվում են դպրոցում: Դպրոցականները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են [10,էջ25]:

1. Հանրակրթական դպրոցում մանկավարժի խնդիրը ոչ միայն դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլ նաև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների, արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին և բարոյականության նորմերին: Ողջ մանկավարժական գործընթացը կազմակերպվում և կառուցվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ, որն էլ հնարավորություն է տալիս արտադրելու տվյալ հասարակության համար պիտանի քաղաքացի:

Վերջին տարիներին ուսումնական դասագրքերի խնդիրը հայտնվել է մանկավարժության, հոգեբանության, մասնավոր մեթոդիկաների, առարկայական

ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Այսօր արդեն մեծ հետաքրքրություն է առաջացնում այն հարցերը, թե ուսումնական դասագրքերը ինչ տեղ են զբաղեցնում ողջ կրթական գործընթացում, ի՞նչ ժամանակակից գործառույթներ ունեն, ինչ դեր ունեն սովորողների դաստիարակության գործում և ինչպես են ազդում կրթության որակի բարձրացման վրա: Հանրակրթական դպրոցում , կարևորելով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում դասագրքերին և դրանց բովանդակությանը: Առանձին ուշադրություն է դարձվում հատկապես «Աշխարհագրություն» առարկայի դասագրքերին, քանի որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունեն «Աշխարհագրության» դասագրքերում ներառված դասանյութերի բովանդակությունը, արծածված հարցերն ու առաջադրանքները:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ: Նշանակալից վերափոխումները ազդել են նաև հանրակրթության և առարկայական պետական չափորոշիչների վրա՝ ուղղված կրթելուն, երկրորդայնացնելով դաստիարակության, արժեկողմնորոշման հիմնախնդիրը Հանրակրթական դպրոցում որոշիչ է ՀՀ քաղաքացու անձի արժեքային կողմնորոշման, բարոյական դաստիարակության հիմնահարցը, մայրենիի լեզվի իմացությունն ու պահպանումը, որի համար հատկանշական է հայոց պատմության դասագրքերի արժեկողնորոշիչ ուղղվածությունը:

Պետության և ազգի անվտանգության ապահովման համար գերխնդիր է պետական մտածելակերպ ունեցող, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համամարդկային և ազգային արժեհամակարգով անհատի ձևավորումը:

Ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, հիմնախնդիր է. Վտանգված է սովորողների ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը:

Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է աշխարհագրության առարկայական դասագրքի միջոցով ապահովել ՀՀ քաղաքացու անձի արժեքային բարոյական դաստիարակությունը:

Հետազոտության նպատակը՝

Մոդելավորմամբ առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը աշխարհագրության դասագրքերի դերի կարևորմամբ:

Հետազոտության խնդիրները՝

1. Ներկայացնել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում:
2. Կարևորել <<Աշխարհագրության >> դասագրքերի արժեկողմնորոշիչ նշանակությունը հանրակրթական դպրոցում:
3. Առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման մոդել:

Մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝ Լ. Ի. Բոժովիչի, Ա.Գ. Զդրավոմիսլովայի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Լ. Ռուբինշտեյնի կողմից մշակված արժեքային կողմնորոշման վերաբերյալ դիտարկումները:

Հետազոտության կիրառական նշանակությունը՝

Մեր կատարած տեսական և հետազոտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջադրված հանրակրթական դպրոցում <<Աշխարհագրության >> դասագրքերի կարևորմամբ արժեհամակարգի ձևավորմանն ուղղված մոդելը կարող է նպաստել դպրոց-ընտանիք փոխհամագործակցային սովորողակենտրոն մանկավարժական գործունեությանը:

Հետազոտության մեթոդները՝

- գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի ուսումնասիրություն և վերլուծություն,
- հարցաթերթիկային հարցում,

ԳԼՈՒԽ 1. ԿՐՏՄԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ <<ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ >> ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1.1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում հասարակության արժեքային պատկերացումների շարունակական գործընթացներից: Ձևավորված արժեհամակարգի հիման վրա են որոշվում անձի վարքի դրսևորումներն ու մտածելակերպը: Արժեհամակարգը բնորոշում են հասարակական արժեքների նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքը, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում:

Արդի մանկավարժության պահանջներից է սովորողների արժեհամակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հարկ է դիտարկել արժեքների ընկալման, գնահատման և գործնականում դրանց նկատմամբ արտահայտած վերաբերմունքի տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցն ուղղորդում, խորացնում և ամրապնդում է սովորողների արժեհամակարգը՝ դրանք համալրելով ու հարստացնելով կրթամշակութային ոլորտի արժեքային ձեռքբերումներով, որոնք սկզբում կրտսեր դպրոցի, հետագայում նաև հիմնական դպրոցի կրթության բովանդակության բաղադրատարրերն են կազմում[7,էջ15]:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը:

Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>,- [8,էջ54]։

Արդի կրթական համակարգում դեռևս պահպանվում է արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված հետևյալ մոտեցումը՝ դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը։ Աշխարհագրություն» դպրոցական առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել նվազագույն աշխարհագրական և քարտեզագրական մշակույթ, որն անհրաժեշտ է լիարժեք քաղաքացու համար՝ անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից։ Դպրոցական աշխարհագրությունն ունի կրթական և դաստիարակչական բացառիկ նշանակություն։ Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ։ Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում։ Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ։ Գործ ունենալով ինչպես բնական պայմանների, այնպես էլ հասարակական օբյեկտների ու երևույթների հետ՝ աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարա- 4 կագիտական գիտությունների շփման հատվածում, սերտորեն փոխկապված է դրանց հետ։ Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը։ Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք։ Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորություններին, նյութական ու հոգևոր մշակույթին։ Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու

առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը: Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ:

Մանկավարժության մեջ արժեքային կրթության նոր մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ այս մոտեցման՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Արժեքների և արժեքային կողմնորոշումների մասին տարբեր մտածողներ սկսել են խոսել հասարակական զարգացման ամենավաղ փուլերում: Արժեքների ձևավորման հիմնախնդրին անդրադարձել են հին հույն մատերիալիստ, փիլիսոփա Պլատոնը, Դեմոկրիտը, Սոկրատեսը, իդեալիստ փիլիսոփա Պլատոնը, Արիստոտելը: Հիշատակության է արժանի վերածննդի և լուսավորության դարաշրջանի գիտնականների արժեբանական գիտական հայեցակարգերը՝ ՄիշելՄոնտե, Ֆ. Բեկոն, Ռ. ԴեկարտՋոնԼոկ, Ի. Կանտ, Ֆ. Նիցշեն և այլոք:

Արժեքը և նշանակությունը միշտ չէ, որ համընկնում են: Նշանակությունը կարող է լինել դրական կամ բացասական, արժեքը դրական նշանակություն է: Արժեքը՝ սոցիալական կյանքի դրսևորում է: Այն ձևավորվում է պրակտիկայի, արժեքի մեջ, այսինքն, այն ունի հասարակական բնույթ: Պրակտիկայի հետ կապը որոշում է արժեքների պատմական փոփոխականությունը, արժեքները փոխվում են հասարակության զարգացման հետ, ինչը երեկվա արժեքն է, այսօր կարող է դադարել լինել: Հասարակության կյանքում արժեքների դերը հետևյալն է.

1. Տարբեր արժեքների յուրացման միջոցով մարդը ձեռք է բերում սոցիալական փորձ, կցված է մշակույթին, ձևավորվում է որպես անձ:
2. Մարդը ստեղծում է նոր և պահպանում է հին արժեքներ, որոնք ազդում են մշակույթի զարգացման վրա:

3.Գործողությունների, մտքերի, իրերի արժեքը այն է, թե որքան են նրանք նպաստում սոցիալական առաջընթացին և որքանով է նրանց դերը մեծ մարդու ինքնիրացման գործում:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը տեսական ժամանակ փիլիսոփայական ուղղվածություն ուներ: Ավելի ուշ մանկավարժական արժեբանությունը ձևավորվեց որպես առանձին գիտաճյուղ: Հայ իրականությունում ակնհայտ փաստ է, որ դպրությունը, գիրն ու գրականությունը միշտ էլ դիտարկվել է բարձրագույն արժեք: Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը «Անվիճելի է, որ կրթությունը, լուսավորությունը, առաջնային են եղել Մ. Մաշտոցի արժեքային գիտակցության մեջ, ապացույցը նրա ողջ կյանքը, պետական-հասարակական և մանկավարժական գործունեությունը և այն մեծաթիվ հոգևոր արժեքներն են, որոնք ստեղծվեցին գրերի գյուտից հետո և շարունակում են ստեղծվել ցայսօր: Դրանով իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հայի ազգային գիտակցության մեջ է որպես հայոց մեծ սուրբ, հայ ժողովրդի ազգային մեծագույն արժեք »[7, էջ 85]:

Լ. Թորգոմյանը գալիս է այն եզրակացության, որ «Արժեբանական մոտեցման տեսանկյունից քննարկելով հայ մշակույթի գործիչների կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը՝ գալիս ենք հետևության, որ արժեքներով միաբանված այս մտածողների հայացքներում ընդհանուր են երկիրը, ժողովուրդը, մարդը, քրիստոնեությունն ու նրա հոգևոր արժեքները, կրթությունը, դաստիարակությունը գիտությունը, լուսավորությունն ու դրանցից ածանցվող այլ արժեքներ»[7,էջ 75]:

Լ. Թորգոմյանը գալիս է այն եզրակացության, որ «Արժեբանական մոտեցման տեսանկյունից քննարկելով հայ մշակույթի գործիչների կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը՝ գալիս ենք հետևության, որ արժեքներով միաբանված այս մտածողների հայացքներում ընդհանուր են երկիրը, ժողովուրդը, մարդը, քրիստոնեությունն ու նրա հոգևոր արժեքները, կրթությունը, դաստիարակությունը, գիտությունը, լուսավորությունն ու դրանցից ածանցվող այլ արժեքներ»[7,էջ 77]:

Ս. Լ. Ռուբինշտեյնը փաստում է, որ արժեքները, արժեքային կողմնորոշումները առաջնային չեն, նրանք մարդու և աշխարհի փոխհարաբերության արդյունք են, որոնք միավորում են այն ամենը, ինչ ստեղծել և արժևորել է մարդը իր պատմական զարգացման ընթացքում:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների դերը անձի ձևավորման գործում դիտարկվել են մի շարք հոգեբանների կողմից (Լ. Ի. Բոժովիչը, Ա.Գ. Զդրավոմիսլովան, Ա.Ն. Լեոնտևը, Ս.Լ.

Այսպիսով՝ սովորողների արժեհամակարգի ձևավորումը բավականաչափ բարդ և շարունակական գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում:

Այս գործընթացում անմասն չպիտի մնա նաև ընտանիքը: Հույժ կարևոր է ծնողի հետևողական և տեղեկացված լինելը այս հիմնախնդրում: Եվ ինչպես հիմնավորում է Ա. Թոփուզյանը՝ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները կանխման և հաղթահարման ուղիները» խորագրով գիտաժողովի ընթացքում, դպրոցն ու ընտանիքը, ծնողն ու ուսուցիչը գործընկերներ են և նրանց նպատակները նույնն են: Պրոֆեսորի կարծիքով, պետք է թերթել հայ մանկավարժությանժառանգության՝ հատկապես ընտանեկան դաստիարակությանը նվիրված էջերն ու դրանցից քաղած դասերը համադրել դարի պահանջների հետ»[19, էջ 56]:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Փորձենք հասկանալ թե

ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը աշխարհագրության դասերին։ Չ՞է,որ աշխարհագրության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը ։

Աշխրհագրություն առարկան բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Աշխարհագրության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի

- հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյան փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները,որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է:Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

1.սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2.նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,

3.ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից ,

4.դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից ,

5.սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6.դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից

,7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի

պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,

8.սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,9. ստեղծագործական ,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից ,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա։

Աշխարհագրության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և,ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին ,ուսումնադաստիրակչական գործընթացի օրինաչափություններին։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները։ Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու,նրա սոցիալական , հոգևոր բարոյական փորձի վերաբերյալ գիտելիաներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն։Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով։

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը։ Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներնու հնարները։

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը։

Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ։

«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձին կատմամբ»։

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը։ Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ։ Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ուկարողությունների ստուգումը և այլն։ Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ։ Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության -հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը։

Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը,մեր համոզմամբ,խառը /համակցված/ դասն է ,որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն ։

Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում , ընդհանրացում , ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում , որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է , նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով , կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս : Այս դասի ընթացքում գործադրվոըմ են բացատրական-ցուցադրական, էրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-ցուցադրական,էվրիստիկ զրույցներ, դատողական, ուշադրության կենտրոնում:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության -հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը:

Աշխարհագրություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1. Սովորողներին զինել հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Աշխարհագրության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

Հարցաթերթը նպատակաուղղված է ուսուցիչների շրջանում << Աշխարհագրության>> դասագրքերի արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը :

1. Ի՞նչ եք հասկանում արժեք ասելով , նշեք դրանք:



Տրամագիր 9

Վերոհիշյալ հարցին հարցման մասնակից Հայոց պատմության ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 18%-ը նշել է, որ իրենք կարևոր արժեք են հասկանում, այն ինչը կապված է բարոյական արժեքների հետ՝ ընկերասիրություն, ծնողասիրություն, հայրենասիրություն, այդ արժեքները իրենց համար կարևոր են: 30-ը նշել է, որ արժեք ասելով հասկանում են հայրենիք,ընտանիք,տուն, քանի որ ամուր ընտանիքից է սկսվում արժեքային համակարգ ունեցող քաղաքացու դաստիրակումը, 28%-ը նշել են, որ իրենց համար արժեք է այն ինչ կապվում է հարգանքի արժեքների հետ: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:11%-ընշել է ճշտապահություն տարբերակը: Այսպիսով ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում եւ դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>:

2.Ի՞նչ արժեքներ են այսօր անհրաժեշտ աշակերտներին:



Տրամագիր 10

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ <<Հայոց պատմության>> դասագրքերում ներառված դասանյութերը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Այսպիսով՝ ամբողջացնելով մասնակիցների պատասխանները, կարող ենք եզրակացնել, որ <<աշխարհագրության >> դասագրքերում ներառված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են բազմաթիվ կարևոր արժեքներ:

Հետազոտվող ուսուցիչների մեծամասնությունը՝ 33%-ը, պնդում է, որ <<Աշխարհագրության>> դասագրքում մեծ տեղ է հասկացվում հայրենասիրական և աշխատանքային դաստիարակությանը, մասնակիցների մյուս մասը՝23%-ը առանձնացրել է բարոյական դաստիարակությունները: Դասագրքում տեղ են գտել 23% նաև այնպիսի դասանյութեր, որոնք նպաստում են ընտանեկան, ֆիզիկական, գեղագիտական, բնապահպանական դատիարակության ձևավորմանը: Այսպիսով՝ ուսումնասիրելով դասվարների պատախանները, կարող ենք հասկանալ, որ դասագրքում մեծ տեղ է տրված հայրենասիրական, աշխատանքային և բարոյական դաստիարակությանը, քիչ մաս չեն, բայց դասվարները պետք է գիտակցեն և դաստիարակեն այնպիսի աշակերտներ, որոնք կունենան համամարդկային արժեքներ և կդաստաիրակվեն աշխարհաքաղաքացի:

3. <<Աշխարհագրության >> դասագրքերը արդյո՞ք հնարավորություն են ընձեռում արժեքների ձևավորման համար:



Տրամագիր 11

Հետազոտությանը մասնակցող <<Հայոց պատմություն>> դասավանդող ուսուցիչների մեծամասնությունը՝ 78%-ը պնդում է, որ դասագրքում առկա են բազմաթիվ դասանյութերը, որոնք նպաստում են, հնարավորություն են ընձեռում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Վերլուծելով մասնակիցների նշված պատասխանները կարող ենք եզրակացնել, որ նրանց կողմից առանձնացվել են այն դասանյութերը, որոնցում նկարագրվում, բնութագրվում է բնությունը, գեղեցկությունը, մասնակիցների մյուս մասն էլ նշում է, որ դասագրքի յուրաքանչյուր էջում էլ կան նյութեր, որոնք ունեն գեղագիտական նշանակություն և սովորողների մոտ ձևավորում են գեղագիտական ճաշակ: Տարրական դպրոցի ուսուցիչների մեծամասնությունը պնդում է, որ դասագրքում ներառված բոլոր դասանյութերն էլ ունեն դաստիարակչական նշանակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելով տեսական և հետազոտական ուսումնասիրություններ և վերլուծություններ, եկանք հետևյալ եզրահանգումներին.

1.Վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը մեծ ազդեցություն սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա. արժեհամակարգի ձևավորման թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման բացասական հետևանքների:

2. Հանրակրթական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, անհատական պահանջմունքները՝ ձևավորելով հասարակության զարգացման համար անհրաժեշտ անձնային որակներ: <<Աշխարհագրության >> դասագրքի դերը սովորողների արժեկողմնորոշման գործում մեծ է. ազգային հպարտության ոգով, ստեղծագործական, մշակութային որակներով սոցիալականացված անհատի ձևավորման ու զարգացման համար, որի համար պետք է ներառվեն դաստիարակության հետևյալ բաղադրիչները.

- Բարոյական արժեքներ՝ ազնվություն, սեր իր և միջավայրի հանդեպ, հարգանք, հոգատարություն
- Գեղագիտական արժեքներ՝ գեղեցիկի, մարդու, շրջակա միջավայրի ճանաչում, ընդունում և պահպանում
- Մտավոր արժեքներ՝ սեր դեպի գիտելիքը, դպրոցը, գիրքը, ինքնաճանաչողություն
- Իրավական արժեքներ՝ իրավունքի ձևավորում, պարտաճանաչություն, կարգապահություն
- Ֆիզիկական արժեքներ՝ անձնական հիգիենա, առողջություն, օրվա ռեժիմ և այլն:

Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս.։ Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար։ «Մանկավարժ» հր.։Երևան, 2005, 456 էջ

2.Ամիրբեկյան Գ., . Վարդանյան Ա.Տ.։ Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ։ Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար։ Երևան, «Նոյյան տապան», 2005, 407էջ

3. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ հատոր, «Լույս», 1987

4. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. «Զանգակ» հրատ., 2015, 315 էջ

5. Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից /Գ.Հ. Հարությունյան,Ռ.Ջ. Աղաբեկյան, Զ. Բաղդասարյան, 2011

6.Էլկոնին Դ.Բ.։ Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1975, 68 էջ

7.Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ Երևան 2005։

8. Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածննդի դարաշրջանի հայ մշակույթում, “Մանկավարժ” N3, 2010թ

9.Ղույումչյան Գ.Ե., Դեռահասի գիտական համոզմունքների ձևավորմանը ուսուցման գործընթացում. Երևան,Լույս, 1986

10.Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն. երկու գրքով, Գիրք 1, Եր., «Զանգակ 97»,2005, 464 էջ

11.Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը։ 3-րդ դասարան, Եր.։ «Զանգակ» հրատ., 2017, 512 էջ

12.Թունյան Ջ.Ե., Լ.Մ.Երիցյան։ Կրտսեր դպրոցականի հոգեբանություն։ Ուսումնամեթոդական ձեռնարկ։ Երևան, 2013թ

13.Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981 թ

14.Հայոցլեզու,գրականություն, Հանրակրթականհիմնականդպրոցի

առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան)։ Եր., Անտարես, 2011, 81 էջ

15.Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան)։ Եր., Անտարես, 2011, 40 էջ

16.Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի-3»։ Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք։ 239 Մաս 1, Եր., «ՄԱՆՄԱՐ», 2020,88 էջ

17.Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի-3»։ Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք։ 239 Մաս , Եր., «ՄԱՆՄԱՐ», 2020, 80 էջ։

18.Бейлунцон, Б.Г., Зуев Д.Д. (1985). О функциональном подходе к оценке школьных учебников. Проблемы школьного учебника, вып. 5, Москва “Процвещение” .

URL: https://applied-research.ru/ru/article/view?id=8050

19.Л. П. Крившенко, Педагогика: Учебник, Изд-во Проспект, 2010. - 432 с https://studfile.net/preview/5183125/page:26/

20.В. И. Смирнов, ДИДАКТИКА. Часть I. Общетеоретические основы : Учебное пособие**.** Нижнетагильская государственная социально-педагогическая академия, 2012. – 306 с.

21.https://docplayer.ru/69158701-Uchebnik-istorii-i-ego-rol-v-uchebnom-processe.html

22..Роль школьного учебника в образовательном процессе. https://bit.ly/2H7gwxV21.